

խնամակալ թագաւորի. քանզի 'ի նմին ժամանակի կային այլք այսպիսիք. որպէս Պայլքն Դ Լեւոնի՝ Հեթում ջամբուլայն եւ Հեթում սենեստրալն, զորս եւ *Պայլերն* կոչէ յամի 1321՝ Պոռքսիմոսն Պետրոս, գրելով 'ի ներքոյ ստորագրութեան նոցին որ 'ի դիմաց թագաւորին: Չպաշտօն կամ զիշխանութիւն Պայլի՝ թուի թարգմանօրէն իմն յարմարմամբ հին անուանց, կոչել Եսայեայ Եչեցոյ՝ (զՕշին) 'ի թղթին, «*Պայլ եւ Մարգըպան ամենայն Հայոց*». որպէս եւ զՀեթում Պատմիչ՝ «Գունդ (կոմս) եւ *Կողմնակալ Սովրիոյ*» (Իսաւրիոյ), այլ յաւէտ՝ առատութեամբ քան ճշդութեամբ երեւին այսպիսի ասացուածք: Յիշի 'ի պատմութեան՝ տոհմն *Պայլոնց*, հաւանօրէն սերեալ յՕշնէ՝ որդւոյ Թագաւորահօրն:

Երկրորդ ըստ պատուոյ, այլ ոչ ըստ զօրութեան՝ երեւի **Իշխանաց իշխանն** կամ **Իշխան Թագաւորութեան**, որպէս կոչեաց արքայահայրն Կոստանդին զերրորդ որդի իւր զԼեւոն. 'ի դէպ էր կոչել եւ *Պարոնայց Պարոն*, զի նոյն տեսաք զերկուսին կոչմունս, մին նոր, միւս ըստ հին Հայոց. ըստ որոց՝ 'ի դէպ էր եւս կոչել Տերանց տէր, որպէս եւ կանանցն **Տիկնաց տիկին**. եւ այսպէս իսկ կոչեցեալ եւ նշանակեալ գտանեմք յարքունի Յայսմաւուրս՝ զմայրն Կեռ-Ան թագուհւոյ (կնոջ Բ Լեւոնի), որ էր դուստր Հեթմոյ որդւոյ Կոստանդինի՝ եղբորորդւոյ Ս. Լամբրունեցոյն. սորա մակդիր ոչ գտանի 'ի հայումս, այլ խորագիր փռանկ պարգեւագրի նորուն, (որ կորուսեալ է), պահէ զնշանակ **Թագադիր** լինելոյ, քանզի ստորագրեալ վկայի Meteor de la Couronne des Ermines. որ կամ ուրոյն պատիւ ինչ էր եւ կամ նոյն ընդ իշխանաց իշխանի: Չատ յերկուց աստի (Լեւոն եւ Կոստանդին) ոչ գտի զայլ ոք կոչեցեալ Իշխանաց իշխան կամ Թագադիր, եւ ոչ այլ Տիկնաց տիկին. գուցէ թէ եւ մարք թագուհեաց այսպէս կոչէին:

Յիրական եւ 'ի մշտակայ պաշտօնեայս՝ նախադասի յարքունիս Սիսուանայ, որպէս եւ 'ի Փռանկացն, **Գունդստապլն**, որ է ընդհանուր *Սպարապետ*, որպէս եւ կոչի իսկ ուրեք, եւ կոչէ զինքն՝ յատկապէս կոչեցեալն գունդստապլ (ցամս 50) *Սմբատ*՝ որդի Կոստանդինի արքայահօր. բառն լատին (Comes Stabuli) եւ փռանկացեալն յայնմանէ (Connétable, զոր եւ Յոյնք յեղեալ են յիւրեանց բարբառ Κοντασταβλος), յատկապէս *Ախոռապետ* նշանակէ, իբրոյ զի յաւէտ Հեծելոց զօրականին

---

Թերեւս Ա Օշնի պայլի թոռն է *Սիր Օշին* Պայլոնց † յԵգիպտոս յարշաւանս Ղազան դանի, որ է յամս 1299-1301. եւ որոյ յիշին որդիք Թորոս եւ Վասակ, եւ երեք դստերք: